ԴԱՐՁՅԱԼ ԴՎԻՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1987 թ. 2-րդ համարում հրապարակվել է Ժորես Խաչատրյանի հոդվածը՝ նվիրված Հելլենիստական Հայաստանի պատմության, քաղաքաշինության, պաշտամունքի մի շարք հարցերին՝։ Հենց սկզբից ասենք, որ հեղինակը մի նպատակ է հետապնդել. հերքել Դվին քաղաքի հիմնադրման և նրա նախնական պատմության հետ կապված բոլոր աղբյուրները, փաստերը, ցույց տալ, որ այն «Խոսրով Կոտակի կողմից չհիմնադրվեց որպես մայրաքաղաք» (էջ 56), որ Դվինը «անշշան բնակավայր էր, ուստի ավերածության չի ենթարկվել» (էջ 55), քանի որ տեղադրված էր առևտրական ճանապարհներից դուրս (էջ 48) և որ այստեղ «չէր կարող լինել ո՛չ տաճար, ո՛չ ամրոց, ուստի պաշտպանական կարևոր նշանակություն չէր կարող ունենալ Արտաշատի և Գառնիի համար» (էջ 48) և այլն։ Այս ամենն արվում է, որպեսզի ներկայացված համայնապատկերի վրա նսեմացվի Դվինը և ավելի քան ակնառու դառնա «Մեծն Արտաշատը»՝ իր տաճարներով, առևտրական ուղիներով։ Անհասկանալի է մնում, թե ի վերջո ու՞մ և ինչի համար է արվում այդ ամենը։ Մինչև այժմ ոչ մի հեղինակ չի ժխտել Արտաշատի խաղացած մեծ դերը մեր ժողովրդի պատմության ամենահետաքրքիր ժամանակաշրջաններից մեկի՝ մ. թ. ա. II— մ. թ. V դդ. քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքում, իսկ հեղինակը այն «պաշտպանում է» ինչ որ մեկի ոտնձգություններից, որոնք «նսեմացնում են» Արտաշատի նշանակությունը։ Հիշյալ խնդիրների ուսումնասիրության համար, Ժ. Խաչատրյանի ասելով, «Դվինի և Արտաշատի պեղումները թույլ են տալիս նորովի մեկնաբանել այդ հարցերը» (էջ 46)։ Դժբախտաբար այդ հարցին վերաբերող Դվինի պեղումների արդյունքները հոդվածագրին քաջածանոթ չեն, մինչդեռ դրանք շատ կարևոր են քաղաքի սկզբնավորման պատմության համար։ Հոդվածի հիմնական հետևություններն արված են սոսկ սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորություններից ելնելով, որոնց մի մասը մեկնաբանված է կամայական, հեղինակի տեսակետներն առաջ մղելու համար։ Քննենք դրանք առանձին-առանձին։

Հոդվածն անմիջապես սկսվում է Տիր-Ապոլոն տաճարի տեղադրության հարցի «քննությամբ» և դրանից բխող հետևություններով։ Խնդիրն այն է, որ Մովսես Խորենացին, հաղորդելով Արտաշատի հիմնադրման փաստը Երասխ և Մեծամոր գետերի միախառնման վայրում՝ բլուրների վրա, նշում է, որ Արտաշեսը «փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն»[2]։ Արշակունիների հարստության հաստատումով, մ. թ. I դարում հայկական պանթեոնում տեսնում ենք Տիրին, որը համադրվում է Ապոլոնի հետ[3]։ Տիրի տաճարի ավերման մասին IV դ. սկզբներին վկայում է Ագաթան-

---

1 Ժորես Խաչատրյան, Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթներին, Երազամույն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին [ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 1987, № 2, էջ 46—57 (այսուհետև՝ «Լրաբեր»)]։

2 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», քննական բնագիր Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1981, էջ 210 (այսուհետև՝ Մովսես Խորենացի)։

3 Բ. Ն. Առաքելյան, Հին հայկական պաշտամունքը և կրոնը («Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 905), Г. А. Тирацян, Вопросы преемственности официального культа в античной Армении («Լրաբեր», 1985, № 10, էջ 64)։

գեղոսը. «Ապա ինքն իսկ թագաւորն (խոսքը Տրդատ Մեծի մասին է — Ա. Ք.) խազայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր։ Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, ղպրի գիտութեան fրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեծեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ fակեալ այրեալ աւերեալ fանդեցին»[4]։

Հոդվածագիրը, ելնելով նրանից, որ Տիրը համադրվել է Ապոլոնի հետ, գտնում է, որ երկու տաճարներն էլ հիմնվել են միևնույն տեղում[5]։ Ինչ խոսք, առաջին հայացքից հետևությունն ասես մոտ է ճշմարտությանը։ Սակայն տաճարի տեղադրման հարցում նա սխալվում է, իսկ դա Տիրի տաճարը Դվինում գտնվելու իրողությունը մերժելու հետևանք է։ Որպեսզի դա ավելի հաստատ հնչի և ընդհանրապես առմիշտ չկապվի Դվինի անվան հետ, հոդվածագիրը տաճարը տեղադրում է Երասխի աջ ափին՝ «Գինուոյ բլուր» կոչված վայրում, Արտաշատից ոչ հեռու՝ հետագա «Արքունի պողոտայի» վրա, որը Արտաշատը կապում էր Տիգրանակերտի հետ։

Երասխի աջափնյա ճանապարհին՝ «Արքունի պողոտային» միացող Արտաշատ-Վաղարշապատ հատվածի կարևորությունը ապացուցելը ձեռնտու է հեղինակին, որն այն առաջին հերթին ուզում է հիմնավորել Տրդատ-Գրիգորի կողմից հեթանոսական տաճարների ավերման առնչությամբ։ Մինչդեռ դա բոլորովին էլ այդպես չէ։ Եթե անգամ ճանապարհի այդ հատվածը գոյություն ունենար, ապա դրա կատարած դերը երկրորդական էր և կարող էր օգտագործվել միայն Երասխն անցնելու հնարավորության սահմաններում։ Ագաթանգեղոսի վկայությունը նույնիսկ Պարթև Անակի հետապնդման վերաբերյալ, որ բերում է հոդվածագիրը որպես Երասխի աջափնյա ճանապարհի առկայության ապացույց, չի հաստատում այդ փաստը։ Ագաթանգեղոսը տեղեկացնում է, որ, հետապնդողները բաժանվելով երկու մասի, «ոմանք ընդ ցամաքն անապարեալ, ճասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի։ Զի գեան Երասխ յարուցեալ գայրլի դարիւ և դարիւ սառնաճալ, ջրակուտակ, ձիւնասոյզ, ձիւնախաղաղ բազմութեամբ յաւուրս իւրոյ պղտորութեանն»[6]։ Այստեղից պարզ է դառնում, որ հետապնդողները չեն կարողացել անցնել Երասխը. հակառակ դեպքում պատմիչը հատուկ չէր նշի այդ փաստը։ Հետապնդողների երկրորդ խումբը, անցնելով Վաղարշապատի Մեծամորի կամուրջը (և ոչ թե Երասխի), ավելի կարճ ճանապարհով, հավանաբար, երկու գետերի հովտով աճապարելով հասնում է Արտաշատ։ Ցամաքային ճանապարհն այն ուղին էր, որը համընկնում էր Արտաշատ-Վաղարշապատ ձախափնյա գլխավոր մայրուղու՝ պատմիչների հիշատակած «Բոն պողոտայի» հետ։

Ագաթանգեղոսի վկայությունից հետևում է, որ Տիրի տաճարը[7] կառուցվել է Արտաշատից դուրս՝ Արտաշատ-Վաղարշապատ հիմնական ճանապարհի վրա, որը անցնում էր Մեծամորի ձախ ափով[8]։ Այն խիտ բնակեցված էր դեռևս այդ ժամանակաշրջանում և կարևոր էր առևտրական ճանապարհի և անցնող կարավանների պահպանության առումով։ Այդ ուղին հայտնի էր և բանուկ նաև միջին դարերում. այն Այրարատը (Շիրակի և Գուգարաց աշխարհի վրայով)

---

4 «Ագաթանգղեայ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանահանց, Տփղիս, 1909, էջ 404 (այսուհետև՝ Ագաթանգեղոս)։ Հոդվածում կատարված բոլոր ընդգծումները մերն են։

5 Ժ. Խաչատրյան, Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ («Էջմիածին», 1981, № 2, էջ 58—59)։ Պետք է ասել, որ հիշյալ հարցերի մեծ մասը քննված է այս հոդվածում։

6 Ագաթանգեղոս, էջ 24։

7 Նույն տեղում, էջ 404։

8 Տե՛ս Մ. Տ. Երեմյանի կազմած քարտեզները. «Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում» և «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում» (Երևան, 1979)։

կապում էր Արևմտյան Վրաստանի ու Մերձևեծովյան շրջանների հետ։ Որպեսզի ճիշտ ընկալվի այդ ճանապարհի Արտաշատ-Վաղարշապատ հատվածը, կարևոր է որոշ պատկերացում ունենալ տվյալ ժամանակաշրջանում Երասխի և հատկապես Մեծամորի հունների մասին։ Հայտնի է, որ մ. թ. ա. II դ. Մեծամորը, սկիզբ առնելով Արմավիրի մոտակայքից, Վաղարշապատի արևմտյան կողմից իջել է հարավ՝ իր մեջ ներառնելով Քասախ, Հրազդան և Ազատ գետերի ջրերը և, Երասխին դրեթե զուգահեռ ընթանալով, վերջինիս խառնվել է Արտաշատ մայրաքաղաքի մոտ։ Մ. թ. IV դ. Մեծամորը հունը փոխել էր։ Այս հարցերը հաջողությամբ բացահայտել է Թ. Ավդալբեկյանը[9]։ Մեծամորի հունը պարզորոշ նշմարվում է Երևան-Արտաշատ այժմյան խճուղու որոշ հատվածներում և դրանից արևելք։ Արտաշատ-Վաղարշապատ ճանապարհն անցել է քիչ ավելի արևելք, ավելի մոտ միջնադարյան Դվին քաղաքի մատույցներին, բան ենթադրվում է։

Վերջինիս հետ անմիջապես առնչվում է Ս. Երեմյանի առաջադրած վարկածը[10], ըստ որի Տրդատ Ա-ն իր գահակալությունը սրբագործելու համար հիմնում է սրբավայր՝ «Դուին-Ասսակը», որը նույնացվում է Ագաթանգեղոսի՝ վերոհիշյալ հատվածում հիշատակած Տիրի տաճարի հետ։ Մեկ այլ տեղում Ագաթանգեղոսը գրում է, որ Տրդատը «...զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր»[11]։ Եվ ահա Ս. Երեմյանը «Արշակունի տոհմի հայրենական պաշտամունքի վայրերից մեկը» համարում է Տիրի տաճարը և այն տեղադրում է Արտաշատից հյուսիս՝ Դվինում, որը չի ընդունում հոդվածագիրը։ Վարկածը հիմնված է այն փաստի վրա, որ Արշակունիների գլխավոր տաճարներից մեկը, որտեղ օծվել էր դինաստիայի հիմնադիր Արշակ-Տրդատը, գտնվում էր Իրանի հյուսիս-արևելքում՝ Աստավենե երկրի գլխավոր քաղաք Ասսակում[12] (ոչ թե Հիրկանիա՝ Վրկանաց աշխարհում, ինչպես նշված է Ժ. Խաչատրյանի հոդվածում)։ Հարևան Վրկանաց աշխարհում հանդիպող մի շարք բնակեցված բլուրներ կոչվել են՝ Գիրա-Դուվին, Լալա-Դուվին, Սուլթան-Դուվին և այլն[13], իսկ Աստավենեի Քուչան (նախկին Ուստուվա) քաղաքը XIII դ. անվանվել է Դավին[14]։ Այս ուշագրավ տեսակետն իր արտացոլումն է գտել «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հատորներում և արժանի է լուրջ ուշադրության[15]։ Ինչ խոսք, անընդունելի է այն թեզը, ըստ որի Տիրի տաճարը համարվում է Դվինի Կաթողիկե եկեղեցու նախնական շինությունը, քանի որ վերջին տարիների պեղումներով վերջնականապես ճշտված է եկեղեցու IV դարի վերջին կառուցված լինելու իրողությունը։ Մեր կարծիքով Տիրի տաճարը, անկախ նրանից կկոչվեր Դվին-Ասսակ թե ոչ, կառուցվել է «Դվնոյ» կամ «Մեծամորի» դաշտում, որի միջով անցնում էր Արտաշատ-Վաղարշապատ ճանապարհը։ Տաճարը պետք է շատ մոտ լիներ Դվինին. ակներևաբար այն գտնվում է ժամանակակից Կանաչուտ-Դեղձուտ-Արևշատ գյուղերի սահմաններում, որտեղից հայտնի են մոնումենտալ շենքերի հետքեր և ճարտարապետական մնացորդներ։ Այստեղ շատ պարզ նկատվում է Ազատ գետի նախկին հունը (դա հիշատակում է նաև Կ. Ղաֆադարյանը[16]), որը, անցնելով Դվինի միջնադարյան տարածքում գտնվող Այգեստան գյուղի արևմտյան

---

9 Թ. Ավդալբեկյան, Արաքսի հնադարյան հունն Արարատյան դաշտում («Գիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 80—101)։

10 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 761։

11 Ագաթանգեղոս, էջ 19։

12 Է. Լ. Դանիելյան, Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները» («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 174)։

13 M. V. Minorsky, Le nom de Dvin („Revue des études arméniennes", t. x, f. 1. Paris, 1930, p. 117—120).

14 Նույն տեղում, էջ 118։

15 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 826, հ. 2, Երևան, 1984, էջ 88։

16 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 28։

եզրով, իջել է հարավ և, հավանաբար, խառնվել է Մեծամորին մոտերքում։

Այս առումով խիստ հետաքրքիր է Բուզանդի վկայությունը Խոսրով Կոտակ թագավորի անտառ տնկելու աշխատանքների վերաբերյալ. «Եւ ետ հրաման թագաւորն... բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յԱյրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամօրի, ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ՚ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղնին: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: Եւ միւս՚ի մայրեացն յեղէգնաբերանին՚ի նմանէ՚ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն՝ տնկով... և զերկուսեան աեղիսն պարսպեալ փակեցին. և ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին»[17]: Պատահական չէ, որ առաջին անտառը տնկվել է մինչև Տիկնունի-Դվին և այն անվանվել է «Տաճար մայրի»։ Երկրորդ անտառը տնկվել է հարավային կողմում մինչև «Եղեգնաբերանը», այսինքն մինչև Մեծամոր գետը։ Դրանք չեն կցվել միմյանց, որովհետև այնտեղով անցել է Արտաշատ-Վաղարշապատ ճանապարհը, որն առանց անվան հիշատակում է պատմիչը։ Բնականաբար, այդ ճանապարհը բավականին մոտ էր Տիկնունիին և Դվինին։ Հետևաբար, Տիրի տաճարը հեռու չի եղել Դվինից։ Այսպիսով մենք հակված չենք Տիրի տաճարը տեսնել «Դինւոյ բլուրի» վրա, թեև հոդվածագիրը գրում է, որ «Ագաթանգեղոսը հիշատակում է Տիրի տաճարը «Երազամոյն» կոչված վայրում, այսինքն, եթե դա Դվինում լիներ, պետք է նշեր Դվին (բլուր) կամ Աստակ» (էջ 48)։ Անհիմն է այդպիսի հետևության հանգելը, քանի որ նույն ձևով պատմիչը չի հիշատակում նաև «Դինւոյ բլուրը»։

Այժմ անդրադառնանք Դվինի հիմնադրման խնդրին։ Սխալ կլինի կարծել, որ Դվինի հիմնադրման վերաբերյալ մեր «պատմագիտական գրականության մեջ որոշակի կարծիք չկա» (էջ 51)։ Ընդհակառակը, բոլոր ուսումնասիրողները, որոնք անդրադարձել են Հայաստանի վաղ ֆեոդալիզմի, վաղ քրիստոնեության պատմության, մշակույթի, ճարտարապետության հարցերին՝ միաբերան ընդունում են, որ Դվինը հիմնադրվել է IV դ. 30-ական թվականներին Խոսրով Կոտակ Արշակունի թագավորի կողմից[18]։ Կ. Ղաֆադարյանը, հիմնվելով մի քանի վկայությունների և պատահական գտածոների վրա, գտնում է, որ Դվինը IV դ. 30-ական թվականներին մայրաքաղաք դառնալուց առաջ ունեցել է քաղաքային բնակչություն[19]։ Սակայն այս կարծիքը չի կարելի ընդունելի համարել և այն կարոտ է հետագա ուսումնասիրության։ Հեղինակների մի մասը (Գր. Խալաթյանց, Աս. Շահնազարյան)[20] չի ընդունում Դվինի՝ քաղաք, այդ թվում և մայրաքաղաք դառնալու փաստը Արշակունիների ժամանակ։ Այդ կարծիքին է նաև Վ. Հարությունյանը[21], որը ժխտում է Արշակունիների՝ Դվինը մայրաքաղաք դարձնելու իրողությունը։

---

17 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 28—29 (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ)։

18 Հիշատակենք դրանցից մի քանիսը. Միքայել Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1985, էջ 429, Կարո Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, հ. 2, 1982, Բաբկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 35, 71, Վ. Մ. Հարությունյան, Դվինի I—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 22, Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, с. 22, Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 78—79, Ա. Ս. Շահնազարյան, Արտաշատ («Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանի», հ. 4, Երևան, 1952, էջ 201) և այլն։

19 Կարո Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 2, էջ 137։

20 Նույն տեղում, էջ 136։

21 Վ. Մ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 22։

Ինչ վերաբերում է մեր տեսակետին Դվին-Արտաշատ փոխհարաբերության խնդրում, ապա այն շատ հստակ ներկայացվել է մեր վաղ աշխատանքներից մեկում. «IV դ. 30-ական թվականներին հայոց Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը հայոց արքունիքը Արտաշատից տեղափոխում է Դվին։ Արտաշատն ավանդության ուժով շարունակում է մնալ քաղաքական կենտրոն, համայնաժողովների վայր, նախարարական զորաբանակների հավաքատեղի։ Արտաշատը IV դ. վերջում մնում է որպես միջազգային տարանցիկ առևտրի խոշոր կենտրոն։ 387 թ. կնքված պարսկա-բյուզանդական պայմանագրով Արտաշատը համարվել է միջազգային փոխանակության երեք կարևոր կետերից մեկը։ Այս ամենը վկայում են, որ մինչև V դարի սկիզբը Արտաշատը խուլ մրցակցության մեջ էր նոր բարձրացող Դվինի հետ։ Այդ մրցակցությունը շարունակվեց մինչև V դարի կեսը, երբ մարզպան Վասակ Սյունեցին ավերեց այն։

Սկզբնական շրջանում Դվինի միջնաբերդը շրջապատված է եղել փոքր բնակավայրով և աստիճանաբար մեծացել է ի հաշիվ Արտաշատից վերաբնակեցված արհեստավորական և առևտրական խավի։

Մինչև V դարի երկրորդ կեսը պատմիչները Դվինի մասին ոչ մի տեղեկություն չեն հայտնում։ Սակայն հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ վերջին Արշակունիների և հայ առաջին մարզպանների օրոք Դվինում կատարվել են շինարարական աշխատանքներ, որոնց հետքերը հասել են մեզ»[22]։

Առկա տեսակետները հիմնված են Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի այն հանրահայտ վկայությունների վրա, որոնք վերաբերում են Դվինի հիմնադրման աշխատանքներին՝ Խոսրով Բ թագավորի կողմից։ Բերենք այդ վկայությունները. «Նա (Խոսրովը— Ա. Ք.) և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր։ Քանզի ի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, և օդք ջերմայինք պղտորեալք ժանդահոտութեամբ փչէին. յորմէ ոչ կարացեալ ժուժել որ յԱրտաշատն բնակեալ էին՝ կամաւ յանձն առին զփոփոխումն»[23]։ Բուզանդը նույն վայրում անտառատնկման առնչությամբ վերոհիշյալ վկայության մեջ գրում է. «Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին...»[24]։

Պատմիչների՝ միմյանց լրացնող արժանահավատ վկայություններից պարզ է դառնում, որ Խոսրովը արքունիքը Արտաշատից տեղափոխել է Դվին կոչված բլրի վրա, կառուցել է արքունական ապարանք և այնտեղ կամովին տեղափոխվել է Արտաշատի բնակչության մի հատվածը։ Կասկածից վեր է, որ արքունիքը կարող էր լինել միայն վարչական կենտրոնում։ Ի վերջո, չկարողանալով խուսափել ծանրակշիռ փաստերից, Ժ. Խաչատրյանը նույնպես ընդունում է արքունիքը Արտաշատից Դվին տեղափոխելու իրողությունը, սակայն նորից վերապահությամբ, որ «դա, հնարավոր է, եղել է ամառվա ամիսներին ժամանակ անցկացնելու համար, երբ Արտաշատի ճահիճները գարշահոտ էին արձակում (պետք է ենթադրել, որ ձմեռը այդ գարշահոտությունը վերանում էր— Ա. Ք.), իսկ Դվինում և անտառի տեղանքում կլիման ավելի մեղմ էր» (էջ 54)։

Արտաշատից արքունիքը Դվին տեղափոխելու հարցը և այնտեղ մայրաքաղաք հիմնելու փաստը չի կարելի դիտել միակողմանի և այն կապել միայն բնակլիմայական պայմանների փոփոխման հետ։ Եղել են և այլ ավելի խոր սոցիալական պատճառներ, որոնց մասին մենք կարող ենք միայն ենթադրել։ Իհարկե, շատ կարևոր էր Դվին բլրի դիրքը շրջապատի նկատմամբ և առևտրական կարևոր ուղու վրա գտնվելը։

---

22 Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, էջ 9։

23 Մովսես Խորենացի, էջ 316։

24 Փավստոս Բուզանդ, էջ 29։

Ուշադիր պետք է լինել պատմական աղբյուրների նկատմամբ և ճիշտ ընկալել։ Երբ քննարկվում են վիճելի հարցեր, պետք է աղբյուրների վկայությունները ներկայացնել ամենայն բարեխղճությամբ և ոչ թե հարմարեցնել սեփական տեսակետներին, ինչպես վարվել է հոդվածագիրը։ Նա գտնում է, որ Դվինում միայն անտառն է պարսպապատավել, և շատ փոfրաթիվ fանակությամբ մարդիկ են տեղափոխվել Դվին, հակառակ պատմիչների վերոհիշյալ վկայությունների։ Նույն էջի մի ամբողջ մեծ հատվածում, որը գրեթե բառացի բերված է Ա.ս. Շահնազարյանի «Արտաշատ» աշխատությունից[25] առանց հեղինակին վկայակոչելու, հոդվածագիրը կամենում է ցույց տալ, որ Արտաշատը մեծ քաղաք էր, իսկ Դվինը աննշան բնակավայր, որը Շապուհ Բ-ն նույնիսկ անհրաժեշտ չի համարել ավերել։ Ինչ խոսք, սա պատմական փաստերի վերլուծության հիմնազուրկ, կամայական մոտեցում է։ Եվ վերջապես ի՞նչ կապ ունի Արտաշատի մեծությունը Դվինի հիմնադրման և կարճ ժամանակով նրա մայրաքաղաք հաստատվելու իրողության հետ։ Ո՞վ է ժխտում Արտաշատի դերը, հայտնի չէ։ Եթե Շապուհի ավերած մեծ բնակավայրերի թվում չի հիշատակվում Դվինի անունը, դա չի նշանակում, որ այն չի ավերվել, Շապուհն այդ գործում ընտրություն չի կատարել։ Որ Դվինը կարող էր ավերվել, դա երևում է քաղաքի վերջին տարիների պեղումների արդյունքների ընձեռած հնարավորություններից։

Հանրահայտ է, որ Դվինը հիշյալ դեպքերից հետո աղբյուրներում չի հիշատակվում մինչև V դ. 60—70-ական թվականները, երբ այն արդեն մեծ fաղաf էր և հռչակված էր որպես մայրաքաղաք[26]։ Խոսրովի հաջորդները, ելնելով որոշ նկատառումներից և երկրում տիրող քաղաքական իրավիճակից, չհաստատվեցին Դվինում։ Սակայն Դվինը աճում էր և դառնում բազմամարդ բնակավայր։ Ինչպե՞ս կարելի է քամահրանքով խոսել մի բնակավայրի մասին, որտեղ IV դարի երկրորդ կեսին կառուցվել են երկու մեծ եռանավ տաճար, մեկը՝ քաղաքային մասում, մյուսը՝ բլրի գագաթին՝ միջնաբերդում։ Ընդ որում, առաջինը Հայաստանում մինչև այժմ հայտնի պաշտամունքային կոթողների շարքում ամենամեծն է և հոյակերտը։ Վերջին տարիների պեղումները ցույց են տալիս, որ բլրի վրա կառուցված եռանավ տաճարը (առաջ այն համարվել է Արշակունիների գահանիստ դահլիճ)[27], որի վրա նշմարվում է ասորական վաղ պաշտամունքային ճարտարապետության որոշ տարրերի ազդեցությունը[28], քրիստոնեական շրջափուլի վաղնջական կառույցներից է։ Հնարավոր է, որ այն կառուցված լիներ մինչև IV դ. 70-ական թվականները, երբ հայ կաթողիկոսները այլևս չէին օծվում Կեսարիայում։ Այդ տաճարի սյուների տակ բացվել են տուֆե և սպիտակ ավազաքարե սրբատաշ մեծ սալերով շարված հարթակներ, որոնք բերվել են նախորդ շրջանի քանդված մոնումենտալ շինություններից։ Շինության պատերը եղել են կրաշաղախ (քարերի վրա նկատվում են շաղախի հետքեր, ամենայն հավանականությամբ դրանք պատկանել են Խոսրովաշեն կառույցներին)։ Մինչև այժմ մեզ հայտնի չէ հելլենիստական և ուշ անտիկ դարաշրջանից կրաշաղախ պատերով և ոչ մի մոնումենտալ շինություն, չնայած կրի օգտագործումը շենքերի ներքին հարդարանքում զգալի է եղել։ Վաղ ժամանակների շինությունների քարերով է շարվել նաև V դ. 70—80-ական թվականներին կառուցված կաթողիկոսական պալատը։

Այս ամենը ցույց է տալիս, որ ի սկզբանե Դվինում եղել են մոնումենտալ կառույցներ, որոնք տարբեր պատճառներով ավերվել են նույն IV դ., հավանաբար Շապուհ Բ-ի արշավանքների ժամանակ և V դ. կեսին, թերևս Վար-

---

25 Ա ս. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Ա ր տ ա շ ա տ, էջ 198, 200։

26 Բ ա ր կ ե ն Ա ռ ա ք ե լ յ ա ն, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, էջ 35։

27 Կ ա ր ո Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 2, էջ 89—96։

28 G. Tchalenko, Willages antiques de la Syrie du Nord. Le massif du Bélus a l'epoque Romaine, II, Paris, 1953, t. IX, 1, X, 1, XI, 1—3,6.

դանանց դեպքերի կապակցությամբ։ Տարօրինակ է Աս. Շահնազարյանի այն կարծիքը, թե Դվինի առաջին բնակիչները իրենց շինությունների համար օգտագործել են Արտաշատ քաղաքի ավերակներից բերված քարերը և թրծած աղյուսը[29], քանի որ Դվինի շրջակայքում չկային քարհանքեր։

Ժ. Խաչատրյանի հոդվածում զգալի տեղ են զբաղեցնում հելլենիստական քաղաքի ծագման հարցերը, և Տիգրանակերտի կառուցման օրինակով քննարկված է «սինոյկիսմոսի» երևույթը, որը հոդվածագիրը, հիմնվելով նախորդ ուսումնասիրողների տեսակետների վրա, համարում է նորաստեղծ քաղաքների բնակեցման հիմնական ձև (հարկադրաբար կամ արտոնություններ տալու ձևով, էջ 52)։ Եվ քանի որ այդ երևույթը չի տարածվել Դվինի վրա, ապա նա չի հիմնադրվել որպես քաղաք։ Ճիշտ է, Դվինը չի բնակեցվել «սինոյկիսմոսի» միջոցով, բայց դա պատճառաբանություն չէ, նա որպես քաղաք հիմնադրվել է սոցիալ-տնտեսական և քաղաքական բոլորովին այլ պայմաններում։ Ներկա դեպքում Արշակավան քաղաքի բերված օրինակը (էջ 55—56) ամենևին չի համոզում։ Ինչպես հայտնի է, Արշակ Բ-ն բոլորովին այլ նպատակ էր հետապնդում, որի պատճառով էլ քաղաքը կարճատև կյանք ունեցավ։

Դվինը «տարերայնորեն առաջացած քաղաք» (էջ 56) չէր։ Տարերայնորեն քաղաքներ չեն առաջանում։ Հոդվածագրին հայտնի պետք է լիներ, որ սովետական պատմագրության մեջ ֆեոդալական քաղաքների առաջացման այդպիսի տեսություն գոյություն չունի։ Հանրահայտ է, որ քաղաքների առաջացումը կապվում է արտադրողական ուժերի զարգացման, ապրանքային արտադրության աճի և աշխատանքի հասարակական բաժանման հետ։ Ինչ խոսք, սակավ կարևոր դեր չունեն նաև բնակլիմայական և տնտեսական ոլորտի այլ պայմանները։ Այս հարցերը, մասնավորապես կապված միջնադարյան Հայաստանի քաղաքների հետ, մանրամասն քննարկված են Բ. Առաքելյանի կողմից[30] և հարկ չենք համարում կրկին անդրադառնալ այդ խնդրին։

Դվինը հիմնադրվեց մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանում սկսվում էին ձևավորվել արտադրական նոր հարաբերություններ, և նկատվում էր արտադրողական ուժերի որոշակի աճ։ Իհարկե, արտաքին գործոնները զգալի չափով կասեցրին զարգացման այդ ընթացքը։ Յուրաքանչյուր պատմաբանի պարտքն է աղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում, իսկ հնագետ-պատմաբաններինը՝ պեղումների նյութերի հնարավոր օգտագործմամբ՝ ճշգրիտ ներկայացնել դեպքերի ողջ ընթացքը և տեսնել ավելի խոր արմատներ սոցիալական հարցերի մեկնաբանման համար։ Կոնկրետ դա վերաբերում է նաև Դվինին, որի հիմնադրման և որպես քաղաք ձևավորվելու փաստը չի կարելի ժխտել լոկ նրանով, թե պատմիչները լռում են այդ մասին, իսկ քաղաքը չստացավ «դինաստիական անուն» (էջ 55)։

Մի քանի խոսք հոդվածում տեղ գտած այլ թերությունների մասին։ Մեղ թվում է, որ նման հանգուցային հարցեր քննելիս, շատ ուշադիր պետք է լինել գրականությունից և աղբյուրներից օգտվելիս, ամենուրեք հանդես բերել գիտական բարեխղճություն նախորդ ուսումնասիրողների նկատմամբ, առավել ևս, երբ սպասվում է, որ նման հոդվածը երբեք չի կարող անպատասխան մնալ։ Անթույլատրելի է, երբ օգտագործված աղբյուրներում նկատվում են բաց թողնված և աղճատված բառեր, որոնք փոխում են պատմիչի արտահայտած միտքը։ Դա նկատվում է 48-րդ էջում, երբ Ագաթանգեղոսից բերված և ընդգծված վկայության մեջ «մեծարէր»-ը դարձել է «մետատէր», էջ 50-ում «Վարդգեսավան»-ը՝ «Վարդագեսավան», էջ 51-ում «հայակոյտ»-ը՝ «հոյակոյտ», էջ 52-ում «պարսպեալ»-ը «պարապեալ» և այլն։ Երբ հեղինակը խոսում է Դվինի

---

29 Ас. Шахназарян. Двин, историко-географический очерк, Ереван, 1940, с. 12.

30 Բարկեն Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ. հ. 1, էջ 25—70։

հիմնադրման վերաբերյալ եղած կարծիքների մասին, պարզ երևում է, որ նա դրանց մի մասը բերում է Կ. Ղաֆադարյանի աշխատությունից[31] և հենվում նրա ծանոթագրությունների վրա, առանց ստուգելու բնօրինակները։ Այստեղից էլ այն նույն տպագրական սխալները, որոնք եղել են Կ. Ղաֆադարյանի մոտ, տեղ են գտել հոդվածի 27-րդ ծանոթագրությունում։

Այսպիսով՝ անկախ Ապոլոնի և Տիրի համադրությունից, Տիրի տաճարը կառուցվել է Արտաշատ-Վաղարշապատ ճանապարհի վրա, Մեծամորի ձախ ափին։ Արտաշատ-Վաղարշապատ մայրուղին անցել է Դվինի հարավ-արևմտյան մատույցներով, ինչպես դա երևում է գրավոր աղբյուրների վկայություններից և գետահունների դիտարկումներից. հետևաբար Տիրի տաճարը կարող էր կառուցվել Վաղարշապատ-Արտաշատ ճանապարհի վրա Դվինից ոչ հեռու։ Դվինը որպես քաղաք և մայրաքաղաք հիմնադրվել է IV դ. 30-ական թվականներին և աստիճանաբար մեծանալով, V դ. առաջին կեսից դարձել է վարչա-քաղաքական և տնտեսական խոշոր կենտրոն։ Քաղաքի առաջացումը և ձևավորումը կապվում է արտադրական նոր հարաբերությունների ու արտադրողական ուժերի հետագա աճի հետ։

ЕЩЕ РАЗ ОБ ОСНОВАНИИ ДВИНА

АРАМ КАЛАНТАРЯН

Резюме

В статье Жореса Хачатряна «О некоторых традициях эллинистического градостроительства, о местности Еразамуйн и основании города Двина» («Вестник общественных наук» АН АрмССР, 1987, № 2, с. 46—57) рассмотрены вопросы, связанные, в основном, с первоначальной историей Двина и локализацией местности Еразамуйн, где находился храм Тира. На основании неверного толкования первоисточников (Агафангел, Хоренаци, Бузанд) и поверхностного ознакомления с результатами раскопок Двина, Ж. Хачатрян выдвинул точку зрения, согласно которой храм Тира был основан на правом берегу реки Аракс в местности «Гинво блур», а основание самого города Двина не относится к 30-ым гг. IV в. Эти выводы неприемлемы и неверны.

Скрупулезное изучение данных первоисточников показывает, что храм Тира был воздвигнут на левом берегу реки Мецамор, на основной дороге Арташат—Вагаршапат, вблизи от Двина. Двин как город и царская резиденция был основан в 30-х гг. IV в. царем Хосровом и стал крупным центром страны в V в. Об этом свидетельствуют и историки, и результаты раскопок городища последних лет.

---

31 Կարս՝ Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 2, էջ 134—139։